

## **ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ**

### **Գ. Պ. ՍԵՐԳՈՅԱՆ**

*ԳՊՀ դասախոս*

Բանկային ռիսկերի ապահովագրությունը տարիներ շարունակ լայնորեն և բավականին հաջողությամբ իրականացվում է մի շարք տնտեսապես զարգացած երկրներում: Բանկային ոլորտի ապահովագրության առաջին վկայագիրը կազմվել է ԱՄՆ-ում 1911թվականին, սակայն այդ բնագավառի առաջատար դերը պատկանում է անգլիական «Լոյդս» ապահովագրական շուկային:

Բանկային գործունեության ապահովագրության անհրաժեշտությունը կապված է հենց բանկային գործառույթների բնույթի և դրանցում առկա ռիսկերի հետ, ինչը պայմանավորված է նաև շուկայական տնտեսությանը բնորոշ անորոշություններով: Սովորաբար ապահովագրվում են այն ռիսկերը, որոնց վրա բանկը արդյունավետ չի կարող ազդել: Նոր տեխնոլոգիաները, բանկի կառավարման բարդությունները, համակարգչային հանցագործությունները, բանկի որոշ աշխատակիցների չարաշահումները, երբեմն պետության կողմից ոչ էֆեկտիվ և անկանխատեսելի կարգավորումները, տնտեսական գործունեության նոր ոլորտները առաջ են բերում ապահովագրական պաշտպանվածության անհրաժեշտություն, քանի որ այլ միջոցներով հնարավոր չէ արդյունավետ պաշտպանվել վերոհիշյալ ռիսկերից, կրած վնասները վերականգնել:

Ցանկացած երկրում քաղաքական և ընդհանուր տնտեսական մակարդակի կայունացումը, ֆինանսական շուկայի զարգացումը բերում է բանկերի, ներդրումային կազմակերպությունների, հետևաբար և ապահովագրական ընկերությունների կողմից առաջարկվող ծառայությունների ոլորտների ընդլայնմանը: Ռիսկի կառավարման հստակ սկզբունքների մշակումը հանդիսանում է միակ հնարավոր եղանակը՝ բիզնեսի կայունության և հետագա զարգացման հասնելու համար:

Ապահովագրական ընկերությունների աշխատանքը բիզնեսի մյուս տեսակներից էականորեն տարբերվում է ոչ միայն նրանով, որ իր վրա է վերցնում գանազան տնտեսավարող սուբյեկտների գործունեության ընթացքում առաջացող ռիսկերը, այլև այդ ռիսկերը կարողանում է օբյեկտիվ գնահատել և կառավարել: Հետազոտության արդյունքները վկայում են, որ բանկերի և ապահովագրական ընկերությունների միջև լիարժեք և փոխշահավետ համագործակցությունը անհրաժեշտ է կառուցել այնպես, որ բանկերի ռիսկերի մի մասը հանձնվի ապահովագրական ընկերություններին և դրանք ձեռնտու լինեն երկու կողմերի համար: Այս դեպքում բանկերը իրենց հիմնական ուշադրությունը կկենտրոնացնեն անմիջական բանկային ծառայությունների տրամադրման և դրանց ընդլայնման խնդիրների լուծման վրա և «ռիսկ-շահութաբերություն» մարտավարության ընտրության գործում ավելի ճկուն քաղաքականություն կիրականացնեն: Ապահովագրական ընկերությունների կողմից ռիսկերի ընդունումն իր հերթին կարևոր նշանակություն ունի բանկերի կայունության և հուսալիության բարձրացման գործում: «Բանկ-ապահովագրող» համագործակցությունը հնարավորություն է

տալիս բանկային ծառայությունների ռիսկայնությունը նվազեցնել, մշակել տնտեսական բնույթի ռիսկերի ապահովագրության նոր տեսակներ, որոնք նպատակաուղղված են բանկային, հետևաբար և ապահովագրական ծառայությունների պահանջարկի ավելացման գործոնների ստեղծմանը:

Բանկերի և ապահովագրական ընկերությունների համատեղ գործունեության ընթացքում բանկի հաճախորդը հնարավորություն է ունենում ստանալու առավելագույն լրիվ բանկային և ապահովագրական ծառայությունների համախումբ, որոնք միմյանց լրացնելով՝ զգալիորեն բարձրացնում են սպասարկման արդյունավետությունը: Առանձին-առանձին աշխատելու պայմաններում ո՛չ բանկերը և ո՛չ էլ ապահովագրական ընկերությունները չեն կարող ապահովել ծառայությունների այդպիսի համախմբված ծրագրեր:

Բանկային ռիսկերի կառավարման բարդ և բազմաստիճան բնույթը կարելի է զգալիորեն պարզեցնել՝ տնտեսական և ոչ տնտեսական բնույթի որոշ ռիսկեր (բանկի շինությունների և նրանցում գտնվող գույքի, տրանսպորտային միջոցների, աշխատակիցներին դժբախտ դեպքերից ապահովագրություն) ապահովագրական ընկերություններին տրամադրելով, որոնց մասնագետները ի վիճակի են առավել օբյեկտիվորեն գնահատելու, մշակելու և կազմակերպելու ռիսկերի կառավարման մարտավարությունը: Ըստ որում, բանկը ստանում է հուսալիության առավելագույն ապահովվածություն, որն իր հերթին դրականորեն է անդրադառնում նրա վարկանիշի վրա:

Համագործակցելով բանկերի հետ, ապահովագրական ընկերությունները հնարավորություն են ստանում բարելավելու իրենց ֆինանսական կայունությունը այն տեսանկյունով, որ բանկերը ներգրավվում են ապահովագրական ընկերության ակտիվների կառավարման, մարտավարության մշակման և նրա ֆինանսական ռեսուրսների արդյունավետ տեղաբաշխման աշխատանքներում: Հնարավոր է նաև միմյանց միջև փոխադարձ խորհրդատվության իրականացում: Բանկի ակտիվների որակը սերտորեն կապված է վարկային ռիսկի կրող հանդիսացող վարկառուի տնտեսական գործունեության իրականացման մի շարք գործոնների հետ: Այդ ռիսկերի մի մասն, ապահովագրողներին հանձնելու պայմաններում, ապահովվում է վարկառուի հուսալիության բարձր աստիճան, որն իր հերթին բերում է բանկի վարկային ռիսկի նվազեցմանը և ակտիվների որակի բարելավմանը: Բանկը, վարկավորելու ժամանակ, ձգտելով բարելավել իր ակտիվների որակական մակարդակը, ստեղծում է զանազան տնտեսական և ոչ տնտեսական բնույթի ռիսկերի ապահովագրական ծառայությունների համար շուկա, ընդ որում՝ ոչ ֆինանսական ոլորտի ձեռնարկությունների ուղղությամբ: Այստեղ առավել գերակա ապահովագրական տեսակներ են համարվում՝ գույքի ապահովագրությունը /այդ թվում գրավ հանդիսացող գույքը/, արտադրության ընդհատման ռիսկի ապահովագրությունը, զանազան կարգի պատասխանատվությունների ապահովագրությունը /այդ թվում՝ նաև պայմանագրային պարտավորությունների/, բեռնափոխադրումների ապահովագրությունը և այլն: Ապահովագրական շուկայում մրցակցության սրմամբ բանկերի առջև խնդիր է ծառանում օբյեկտիվորեն գնահատելու ապահովագրական կազմակերպությունների գործունեությունը նրանց ներդրումային հնարավորությունների և հուսալիության մակարդակի վերլուծությունների անցկացման ուղղությամբ:

Այս բնագավառում որոշակի փորձ է կուտակվել արտասահմանյան երկրներում: Օրինակ, Ուկրաինայում, Բելառուսում ապահովագրական ընկերությունների վարկանիշները հաշվարկվում են՝ հիմք ընդունելով նրանց ակտիվների ընդհանուր ծավալը, հաշվեկշռային շահույթի մեծությունը, ներդրված կանոնադրական կապիտալի ծավալը և այլն: Նման մոտեցումը չի արտացոլում ընկերության ընթացիկ ֆինանսական վիճակը: Շուկայում ապահովագրական ծառայությունների սրնթաց զարգացման պայմաններում ապահովագրական ընկերությունների գործընկերների, պոտենցիալ ապահովադիրների և ներդրողների համար կարևոր է պատկերացում կազմել նրանց ընթացիկ ֆինանսական վիճակի և գործունեության հետագա կանխատեսումների վերաբերյալ:

Առևտրական, արտադրական, բանկային և այլ ոլորտների ձեռնարկությունների գործունեության ֆինանսական դրության գնահատման ժամանակ կիրառվող զանազան եղանակները կիրառելի չեն ապահովագրական ընկերությունների նկատմամբ՝ նկատի ունենալով նրանց գործունեության յուրահատկությունները: Այդ պատճառով ստորև առաջարկվում են ապահովագրական ընկերությունների ֆինանսական վիճակի վերլուծությունների որոշ սկզբունքային մոդելներ:

Բանկերը ապահովագրական ընկերությունների վերլուծությունները կարող են իրականացնել որպես պոտենցիալ ապահովադիրների և պոտենցիալ ներդրողների: Երկու դեպքերում էլ վերլուծվում է ընկերության հուսալիության մակարդակը: Պոտենցիալ ապահովադիրի տեսանկյունով վերլուծություն կատարելիս, հուսալիության հիմնական չափանիշ է ընդունվում ապահովագրական ընկերության կողմից ստանձնած պարտավորությունների նախկինում պատշաճ կատարումները և ներկայում ստանձնած պարտավորությունների կատարման ռիսկայնության աստիճանը: Պոտենցիալ ներդրողի տեսանկյունով վերլուծություն կատարելիս, հուսալիության հիմնական չափանիշ է ընդունվում ապահովագրական ընկերության ներդրումային ռիսկայնության մակարդակը: Երկու դեպքում էլ, ապահովագրական դեպք տեղի ունենալիս, ապահովագրական ընկերության կողմից ստանձնած պարտավորությունների չկատարումը բերում է կամ մուծված ապահովագրական պարգևների կամ կատարված ներդրումների կորստին: Ընդհանուր առմամբ պարգևները փոքր են լինում ներդրումներից: Սակայն այս դեպքում ապահովադիրը կրում է լրացուցիչ վնասներ այն չափով, ինչ չափով այդ ռիսկի պատասխանատվությունը դրված էր ապահովագրական ընկերության վրա: Բոլոր դեպքերում վերլուծությունների ժամանակ կարևորվում է այնպիսի գործոնների դերը, ինչպիսիք են ապահովագրական շուկայում ընկերության հեղինակությունը, անձնակազմի մասնագիտական մակարդակը, եկամուտների աճի դինամիկան, շահութաբերությունը, ապահովագրական պորտֆելի որակը և տարատեսակության աստիճանը: Վերլուծության կարևորագույն բաղադրիչ են դիտվում բավականաչափ քանակի իրացվելի ակտիվները, վերաապահովագրության հուսալի ծրագրերի առկայությունը, ինչպես նաև սեփական կապիտալի անհրաժեշտ մակարդակը /սեփական ակտիվներ, այդ թվում՝ իրացվելի/:

Ներդրումային գրավչության տեսանկյունով վերլուծությունների կատարումը նպատակ է հետապնդում գնահատելու ապահովագրական ընկերության

ներդրումային ծրագրերի արդյունավետությունը: Վերաապահովագրության ծրագրի առկայությունն անհրաժեշտ է գնահատել վերաապահովագրողի հուսալի լինելու տեսանկյունով: Օբյեկտիվ /ոչ հաշվեկշռային/ ինֆորմացիայի բացակայության պայմաններում դժվար է գնահատել վերաապահովագրող ընկերության հուսալիության աստիճանը: Սեփական պատասխանատվությանը թողնվող ապահովագրական գումարների հիմնավորվածությունը անհրաժեշտ է դիտարկել՝ ելնելով սեփական կապիտալի և պահուստային ֆոնդերի մեծությունից: Որքան բարձր են սեփական պատասխանատվությանը թողնվող ապահովագրական գումարները, այնքան բարձր է նաև ռիսկը, ուստի այդքանով էլ շատ պետք է լինեն այն միջոցները, որոնք անհրաժեշտ են այդ ռիսկերի ծածկման համար: Ռիսկերի ծածկման միջոցները բաղկացած են սեփական կապիտալից և տեխնիկական պահուստներից: Իդեալական պայմաններում ապահովագրական ընկերության ռիսկերը պետք է ծածկվեն տեխնիկական պահուստների գումարներով:

Ելնելով նրանից, որ անհրաժեշտ է վերանայել ապահովագրական սակագների և ակտիվների համապատասխանությունը, որը հանդիսանում է ապահովագրական ընկերության պարտավորությունների կատարման երաշխիք, ձևավորվում է ռիսկերի շրջանակից սեփական պատասխանատվության տակ վերցված ռիսկի նետտո դրույքի համապատասխան աճ՝ կապված անբարենպաստ ապահովագրական դեպք տեղի ունենալու հաճախականության էական շեղման հետ: Մի կողմից հավաքագրված ապահովագրավճարների պահուստների հաշվին նման ավելացումը տեղափոխվում է ընկերության սեփական կապիտալի հաշվին, մյուս կողմից էլ ռիսկի ծածկման համար անհրաժեշտ միջոցների առկայությունը հնարավորություն է տալիս ապահովագրական ընկերությանը սեփական հայեցողությամբ վարվել ավելացած գումարի հետ և ապահովագրական շուկայում իր դիրքերի ամրապնդման նպատակով նվազեցնել սակագները: Նման դեպքերում խտրական սակագները կարող են համապատասխանել կիրառվող ռիսկի մակարդակին, եթե այն ծածկվում է ապահովագրական ընկերության կողմից տնօրինվող այլ միջոցների հաշվին:

Ապահովագրական սակագինը արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$P=M(Y)+L$$

որտեղ՝  $M(Y)$ - ապահովագրական վճարի մաթեմաթիկական սպասումն է,  $L$ - ռիսկային հավելումը:

Միշտ գոյություն ունի ապահովագրական ընկերության լուծարման հավանականություն, որն ընդհանուր առմամբ հավասար է՝

$$P(U+P<Y)=A$$

որտեղ  $U$ - ապահովագրական ընկերության կապիտալն է,

$Y$ - ապահովագրական հատուցումներն են:

Այսպիսով՝ վերլուծություններ կատարելիս կարևոր հարց է հանդիսանում ապահովագրական ընկերության լուծարման հավանականության առկայությունը: Դրա հանգուցալուծման համար ռիսկ-մենեջմենթի տեսության մեջ առաջարկվում է օգտագործել օգտակարության տեսությունը, որը ենթադրում է կոնկրետ տնտեսավարող սուբյեկտի օգտակարության ֆունկցիայի կառուցում:

## СОТРУДНИЧЕСТВО КОММЕРЧЕСКИХ БАНКОВ И СТРАХОВЫХ КОМПАНИЙ

*Г. П. Сергоян*

Для Республики Армения, находящейся на новом этапе экономического развития, очень важно сотрудничество коммерческих банков и страховых компаний, потому что при их совместной деятельности формируются те основные принципы, которые будут способствовать увеличению роста экономики. По этой причине следует обратить особое внимание страхованию банковских кредитов, которое давно и успешно проводится в ряде экономически развитых стран мира.

## THE COOPERATION OF THE BANKS AND THE INSURANCE COMPANIES

*G. P. Serghoyan*

For the RA, which is at the new stage of economic growth, the co-operation of the banks and the insurance companies is very important, as in the case of their joint action from the basic principles, which will favor the Republic's economic development. So it's worth paying special attention on the bank risks' insurance, which is swung in many economically developed countries.

## ՀԱՐԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ ԴԵՐՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

**Գ. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

*ԳԴՀ լաբորանտ, դասախոս*

Երկրի հարկային համակարգը հանդիսանում է ամբողջ տնտեսական համակարգի առանցքային բաղադրիչներից մեկը, որը կարելի է բնութագրել որպես քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլ գործոնների ազդեցության ներքո ձևավորվող բարդ ու դինամիկ կառույց:

Հարկային համակարգի կատարելագործման, բարեփոխման հիմնական խնդիրը համակարգում այնպիսի փոփոխությունների կիրառումն է, որոնք կնպաստեն հարկային վարչարարության պարզեցմանը, հարկատուների հարկերից խուսափելու հնարավորությունների նվազմանը:

Հարկային բարեփոխումներին ուղղված միջոցառումները պետք է հաշվի առնեն հետևյալ 4 բաղադրիչները՝ պարզեցում, ձեռնարկվող քայլերի հեռանկարային ներգործություն, հարկային մուտքերի մակարդակի պահպանում և երկրում տարվող սոցիալ-տնտեսական քաղաքականության հետ համապատասխանություն: Շատ ավելի բարդ խնդիր է, երբ իրականացվում են մի քանի բարեփոխումներ միաժամանակ, որը դժվարեցնում է որևէ մեկ բարեփոխման արդյունքում ստացվող արդյունքի գնահատումը:

ՀՀ-ում հարկային համակարգի օրենսդրական հիմքերը դրվեցին 1992թ.-ին,